ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2020-2025թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՎ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ[1]

[1] Ռազմավարական պլանը մշակվել է ուսումնական տարիների պլանավորմամբ:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ
ԲՈՒՀԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հյուսիսային համալսարանը հիմնադրվել է 1996թ-ին՝ նպատակ հետապնդելով ապահովել գիտականության, օրինապաշտության, մարդասիրության, հայրենասիրության և արդարացիության սկզբունքները:

Իր առաջին պետական հավատարմագրումը համալսարանը ստացել է դեռևս 2001թ.-ին: Այնուհետ, համալսարանում իրականացված ենթակառուցվածքային ինքնավերլուծության և արտաքին գնահատման արդյունքում «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի 21.03.2015թ.-ի №4 որոշմամբ համալսարանին 2 տարի ժամկետով, իսկ 23.03.2018թ.ի №25 որոշմամբ 4 տարի ժամկետով շնորհվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքներին, համալսարանի կանոնադրությանն ու այլ իրավական ակտերին համա-պատասխան: Կազմակերպության կառավարման համակարգում գործում են ինչպես վարչական ենթահամակարգի կառավարող սուբյեկտներ (ռեկտոր, պրոռեկտոր, վարչության պետ, դեկան, ամբիոնի վարիչ), այնպես էլ կառավարման գործընկերային /կոլեգիալ/ մարմիններ (գիտխորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ): Ընդ որում առաջինները հաշվետու են գործընկերային մարմիններին: Համալսարանի կարգերի համաձայն՝ ռեկտորին կից որպես խորհրդակցական մարմին գործում է ռեկտորատը, որն իրեն տրված լիազորությունների շրջանակներում քննարկում է բուհի գործունեության բոլոր ոլորտներին վերաբերող հարցերը, համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարման ընթացքը:

Համալսարանի կառավարման բարձրագույն մարմիններն են՝

1) համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովը,
2) համալսարանի գիտական խորհուրդը,
3) համալսարանի ռեկտորը (գործադիր մարմնի ղեկավարը):

Մասնակիցների ընդհանուր ժողովը համալսարանի կանոնադրությամբ նախատեսված կարգով կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք ունի: Մասնակիցների ընդհանուր ժողովն ընտրում կամ նշանակում է ռեկտորին, կանոնակարգում է բուհի իրավանորմատիվային դաշտը:

Հյուսիսային համալսարանի գիտական խորհուրդը լուծում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցեր, քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին, շնորհում գիտական կոչումներ: Համալսարանի գիտխորհրդի առնվազն 25 տոկոսը ուսանողներ են: Համալսարանի ռեկտորն ի պաշտոնե հանդիսանում է համալսարանի գիտխորհրդի նախագահ:

Համալսարանի գործադիր իշխանությունն իրականացնում է համալսարանի ռեկտորը:

Համալսարանի ռեկտորն իրականացնում է համալսարանի ընթացիկ գործունեության ղեկավարումը՝ կնքում պայմանագրեր, համաձայնագրեր, համալսարանի այլ աշխատակիցների հետ կնքում աշխատանքային պայմանագրեր, հաստատում աշխատանքային հաստիքներ, աշխատանքի է ընդունում և օրենքով սահմանված կարգով աշխատանքից ազատում համալսարանի աշխատողներին, կազմավորում համալսարանի գիտական խորհուրդը և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում աշխատողների լիազորությունները, պաշտոնեական պարտականությունները: Համալսարանի ռեկտորը տարեկան հաշվետվություններ է ներկայացնում համալսարանի մասնակիցների ժողովին:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային համալսարանն իր ստեղծման և գործունեության 25 տարիների ընթացքում առաջնորդվելով կրթական համակարգի առաջնահերթություններով՝ շարունակում է իր գործունեությունն իրականացնել համալսարանի առաքելությանը համահունչ, այն է՝ կրթության որակի գերակայությամբ ազգային լավագույն ավանդույթների և միջազգային առաջավոր փորձի զուգակցմամբ ու կրթության մատչելիության, հասանելիության, կազմակերպման թափանցիկության, մարդասիրական արժեքների ապահովմամբ գիտակրթական գործունեության իրագործում՝ ուղղված ձեռնարկատիրության կառավարման, իրավաբանության, ծրագրավորման, լրագրության, բանասիրության, հոգեբանության, կրթության ոլորտների համար ստացված գիտելիքները գործնականում կիրառելու ունակ կադրերի պատրաստմանը:

Նշված առաքելությանը հավատարիմ՝ Հյուսիսային համալսարանը առաջիկա 5 տարիներին իր նպատակն ու գործունեության առաջնային խնդիրներն է համարում.

- Կրթական գործընթացների կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրման ու շուկայի կարիքների վերհանման միջոցով բարձրորակ կադրերի պատրաստմանն ուղղված ՄԿԾ-ների կատարելագործումը և ՈԱՇ-ին համապատասխան որակավորումների արժանահավատ շնորհումը:
- Համալսարանի գիտահետազոտական ներուժի զարգացումը, ուսումնագիտական և գիտահետազոտական գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների ու ենթակառուցվածքների արդիականացումը:
- Կրթադաստիարակչական գործունեության միջոցով սովորողների ռազմահայրենասիրական ոգու դաստիարակումն ու ամրապնդումը, մարդասիրության, ժողովրդավարության գաղափարների, հասարակության բարոյական և մշակութային արժեքների արմատավորման ու տարածման նպաստումը:
- Օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ կապերի ընդլայնմամբ ու միջազգային կրթական գործընթացներում համալսարանի ինտեգրման ակտիվացմամբ համալսարանի միջազգային համագործակցության զարգացման խթանումը:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2020-2025թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հյուսիսային համալսարանի 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ձևավորում է համալսարանի 2020-2025 տարիների զարգացման ուղղությունները, նպատակներն ու խնդիրները, որոնց լուծումը կնպաստի համալսարանում կրթական ծառայությունների շարունակական բարելավմանը, նոր ենթակառուցվածքների ստեղծմանն ու արդիականացմանը, մարդկային ռեսուրսների թվային հմտությունների զարգացմանը, շահակիցների հետ ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու խթանմանը, համալսարանի կայուն զարգացումն ու մրցունակությունը ապահովող պոտենցիալի բացահայտմանն ու զարգացմանը:

Համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը նախադրյալներ ստեղծեց ԲՈՒՀ-ի նոր կանոնադրության ընդունման հենքի վրա համալսարանի իրավական բարեփոխումների, գիտակրթական ու գիտահետազոտական գործընթացների ենթակառուցվածքների արդիականացման, նոր կապերի ձևավորման ու հեռանկարային փոխգործակցության համար: Միաժամանակ 2016-2020թթ. զարգացման ռազմավարական և բարելավման ծրագրերի կատարողանների վերլուծության արդյունքում բացահայտված ու նոր մարտահրավերների հետևանքով (կորոնավիրուսային համավարակի պատճառով արտակարգ դրության պայմաններում առցանց ուսուցման կազմակերպումը, ընդունելության նոր ընթացակարգերը, Արցախյան 44-օրյա պատերազմը) ի հայտ եկած հանգամանքներով պայմանավորված՝ Ծրագրում ընդգրկված որոշ գործընթացների շարունակականության անհրաժեշտությունից ելնելով՝ վերջիններս ներառվել են նաև 2020-2025թթ. ռազմավարական ծրագրում:

Հյուսիսային համալսարանի 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է այն քաղաքականությունը և միջոցառումների համախումբը, որոնց իրականացումը պետք է հիմք հանդիսանա Համալսարանի կրթության, գիտահետազոտության և նորարարության ոլորտում շարունակական զարգացման համար:

ԾՐԱԳՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հյուսիսային համալսարանի 2020-2025թթ. զարգացման ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) առաջնահերթություն շարունակում է մնալ կրթական չափորոշիչների պահանջներին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստմանն ուղղված գործընթացների իրականացումը:

Համալսարանի ռազմավարական ուղղություններն են՝

- Արդյունավետ կառավարում և վարչարարություն:
- Որակյալ կրթական համակարգ:
- Արտաքին կապերի զարգացում և միջազգայնացում:
- Ուսանողական համակազմ:
- Մարդկային ռեսուրսների կառավարում:
- Ենթակառուցվածք և ռեսուրսներ:
- Հետազոտություն և գիտահետազոտական պոտենցիալ:
- Հասարակական պատասխանատվություն և հետադարձ կապ:

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ՝

Բարելավել համալսարանի կառուցվածքն ու կառավարման համակարգը՝ ապահովելով կառավարման գործընթացների թափանցիկություն, հաշվետվողականություն, կառավարման արդյունավետության բարձրացում և ստեղծել երաշխիքներ համալսարանի ֆինանսական կայունության ապահովման նպատակով:

- **Խնդիր 1.** ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի փոփոխման միջոցով կառավարչական որոշումների կայացման ապակենտրոնացման, թափանցիկության, օբյեկտիվության ապահովում.
  - կազմակերպական կառուցվածքի փոփոխության իրականացում՝ իրավասությունների տարաբաշխում (և՛ ուղղահայաց (ստորակարգման բոլոր մակարդակներում), և՛ հորիզոնական (գործառույթային ոլորտների կառավարում) մակարդակներում),
  - ՊԻԳԲ շրջափուլի ներդրման ընդլայնում ՄՈՒՀ-ում իրականացվող բոլոր գործընթացներում՝ շարունակականության ապահովում:
- **Խնդիր 2.** Համալսարանի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործում.

- ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխում ըստ ռազմավարական ուղղությունների:

- **Խնդիր 3.** Ներդնել ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ՝ համալսարանի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով.
  - ՄՈՒՀ-ի երկարաժամկետ պլանավորման ճշգրտման մեխանիզմների մշակում և ներդնում:

ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՆՊԱՏԱԿ՝

Որակի ապահովման գործընթացների շարունակականությամբ՝ բարձրացնել կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը Եվրոպական կրթական ժամանակակից պահանջներին համապատասխան:

- **Խնդիր 1.** Նպաստել համալսարանի կարողությունների միջազգայնացմանը՝ միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործման միջոցով.
  - մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնասիրման հիման վրա ՄԿԾ-ների արդիականացում: Ուսումնական պլանում ընդգրկված առարկայացանկի վերանայում (շուկայի պահանջների ուսումնասիրման և բենչմարքինգի հիման վրա):
- **Խնդիր 2.** ՄԿԾ-ների մշտադիրտարկում և արդիականացում.
  - կրթական ծրագրերի օպտիմալացում:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՆՊԱՏԱԿ՝

Զարգացնել և ընդլայնել համալսարանի արտաքին կապերը՝ նպաստելով համալսարանի գործընթացների միջազգայնացմանը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:

- **Խնդիր 1.** Մշակել և ներդնել Հյուսիսային համալսարանի միջազգայնացման նոր հայեցակարգ և քաղաքականության ծրագիր.
  - Մշակել Հյուսիսային համալսարանի միջազգայնացման նոր հայեցակարգը և քաղաքականության ծրագիրը, քննարկել այն Համալսարանի ստորաբաժանումների հետ:
- **Խնդիր 2.** Ընդլայնել համալսարանի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ.

- կնքել նոր պայմանագրեր օտարերկրյա գործընկեր համալսարանների հետ, վերանայել հին համագործակցության պայմանագրերը՝ ակտիվացնել վերջիններիս արդյունավետությունը,
- նպաստել ՄՈՒՀ-ի աշխատակիցների և սովորողների շրջանում ակադեմիական շարժունության զարգացմանը,
- քայլեր ձեռնարկել հայ-ռուսական կրթական, գիտահետազոտական և մշակութային կապերն ամրապնդելու ուղղությամբ:

- **Խնդիր 3.** Ընդլայնել համալսարանի համագործակցությունը հայկական սփյուռքի ներկայացուցչությունների հետ տարբեր երկրներում՝ նպաստելով կապերի ընդլայնմանը և այդ կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը.
  - կապեր հաստատել արտասահմանյան երկրների հայկական կենտրոնների հետ, մշակել և ներդնել համագործակցության ծրագիր:
- **Խնդիր 4.** Խթանել համալսարանի ներգրավվածությունը գիտակրթական և հետազոտական դրամաշնորհային ծրագրերին.
  - նպաստել համալսարանի ՊԴԱ-ի և սովորողների միջազգային գիտական դրամաշնորհներին մասնակցությանը:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

ՆՊԱՏԱԿ՝

Ակտիվացնել ՄՈՒՀ ընդունվել ցանկացողների և սովորողների հետ տարվող աշխատանքները, և բազմազանեցնել մատուցվող ծառայությունների շրջանակներն ու որակը:

- **Խնդիր 1.** Համալսարանի փոխգործակցության ընդլայնում հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ կրթական նախաձեռնությունների իրականացման նպատակով.
  - ուսանողական համակազմի ընդլայնման մեխանիզմների մշակում:
- **Խնդիր 2.** Համալսարանի օտարերկրյա ուսանողների թվակազմի ավելացում.
  - նախապատրաստական դասընթացների կազմակերպում, լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում:
- **Խնդիր 3.** Մշակել և ներդնել համատեղ և կրկնակի դիպլոմով ծրագրեր օտարեկրյա գործընկեր համալսարանների հետ.

- Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի աստիճաններում կրկնակի դիպլոմով ծրագրերի մշակում և ներդնում օտարերկրյա գործընկեր համալսարանների հետ:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՆՊԱՏԱԿ՝

Համալսարանի ռազմավարական նպատակներին հասնելու, զարգացման հեռանկարային ծրագրերի իրականացմանն ուղղված գործընթացների շրջանակներում անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով ԲՈՒՀ-ի անձնակազմի համալրում և կադրային ներուժի զարգացում:

- **Խնդիր 1.** Շարունակել կրթական գործընթացների կազմակերպման պրոցեսում երիտասարդ դասախոսների և բարձր որակավորում ունեցող անձնակազմի ներգրավման գործընթացը.
  - սովորողների՝ ներբուհական և միջբուհական գործընթացներում ներգրավվածության բարձրացում:
- **Խնդիր 2.** Շարունակել համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի մասնագիտական հմտությունների և որակավորման մակարդակի բարձրացման ուղղված քաղաքականությունը.
  - ՊԴԱ կազմի և վարչական աշխատակազմի վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացում և որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի կատարելագործում,
- **Խնդիր 3.** Կատարելագործել ՊԴԱ կազմի և վարչական աշխատակազմի վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերը:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՆՊԱՏԱԿ՝

Զարգացնել Համալսարանի ուսումնագիտական գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսներն ու արդիականացել ենթակառուցվածքները:

- **Խնդիր 1.** Համալսարանի տեղեկատվական կառավարման մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովման նպատակով ներդրված E-BUH համակարգի գործարկման գործընթացների ամբողջականացում.

- Համալսարանական E-BUH ավտոմատացված տեղեկատվական կառավարման համակարգի ամբողջական գործարկում:
- **Խնդիր 2.** Կատարելագործել համալսարանի գիտակրթական գործունեությունն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգերը.
  - «ՄՈՒԴԼ» էլեկտրոնային ուսուցման համակարգի արդիականացում և դասընթացների քանակի ընդլայնում:
- **Խնդիր 3.** Շարունակել համալսարանի գրադարանային ենթակառուցվածքների արդիականացման և համալրման գործընթացները.
  - էլեկտրոնային գրադարանի արդիականացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ

ՆՊԱՏԱԿ՝

Զարգացնել ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը, գիտահետազոտական պոտենցիալն ու ավելացնել հետազոտական բաղադրիչը ՄԿԾ-ներում:

- **Խնդիր 1.** Խթանել հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավածության ընդլայնումը.
  - Համալսարանի ՊԴԱ-ի և սովորողների միջազգային գիտական տպագրական ակտիվության խթանում՝ ազդեցության գործակցով տեղական և միջազգային պարբերականներում հոդվածների տպագրման խրախուսման մեխանիզմների ներդնում,
  - ՄՈՒՀ-ի գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի խթանում:
- **Խնդիր 2.** Զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները.
  - ավելացնել սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողությունները՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնուրույնության բաղադրիչի ավելացում:
- **Խնդիր 3.** Շարունակել բարելավել երրորդ աստիճանի կրթության որակը Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխան.
  - բարձրագույն կրթության երրորդ աստիճանում Զալցբուգյան սկզբունքների հետևողական ներդրում: Ամբիոններում երրորդ աստիճանի զարգացմանն ուղղված գործունեության խթանում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Համալսարանն իր առաքելությանը համապատասխան կշարունակի իրականացնել թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության միջավայրում

որակյալ մասնագիտական կրթական գործունեություն ապահովելու՝ հասարակության առջև ստանձնած հանձնառությունը:

ՆՊԱՏԱԿ՝

Շահակիցների հանդեպ որդեգրած տեղեկատվական ու սոցիալական պատասխանատվության գործառույթի իրականացում՝ նրանց սոցիալական ադապտացման, լրացուցիչ կրթական ու մասնագիտական աճին նպաստող ծրագրերի մշակում և ներդնում:

- **Խնդիր 1**. Մշակել ՄՈՒՀ-ի կողմից արտաքին ու ներքին շահակիցներին տրամադրվող կրթական ծառայությունների՝ ըստ ուղղությունների մատուցման համապարփակ ծրագիր.
  - իրականացնել ՄՈՒՀ-ի շահակիցների համար լրացուցիչ կրթական, մասնագիտական ու սոցիալական ադապտացման ծրագրեր:
- **Խնդիր 2.** Զևավորել, ամրապնդել ու զարգացնել ՄՈՒՀ-ի և արտաքին շահակիցների միջև բազմակողմանի փոխհամագործակցություն.
  - իրականացնել ՄՈՒՀ-ի շահակիցների իրավաբանական խորհրդատվություններ,
  - իրականացնել ուսումնագործնական համատեղ ծրագրեր արտաքին շահակիցների հետ:
- **Խնդիր 3.** Բարելավել, հարստացնել և արդիականացնել կատարված աշխատանքների արդյունավետության ստուգման նպատակով հետադարձ կապի մեխանիզմները.
  - իրականացնել հասարակական իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ,
  - ապահովել ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ պարբերական հաշվետվողականություն:

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

2020-2025թթ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ[1]

[1] Ռազմավարական պլանը մշակվել է ուսումնական տարիների պլանավորմամբ:

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ					
Ռազմավարական նպատակ՝ Բարելավել համալսարանի կազմակերպական կառուցվածքն ու կառավարման համակարգը՝ ապահովելով կառավարման գործընթացների թափանցիկություն, հաշվետվողականություն, կառավարման արդյունավետության բարձրացում և ստեղծել երաշխիքներ համալսարանի ֆինանսական կայունության ապահովման նպատակով:					
Խնդիր 1. ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքի փոփոխման միջոցով կառավարչական որոշումների կայացման ապակենտրոնացման, թափանցիկության, օբյեկտիվության ապահովում:					
Կազմակերպական կառուցվածքի փոփոխության իրականացում՝ իրավասությունների տարաբաշխում (և՛ ուղղահայաց (ստորակարգման բոլոր մակարդակներում), և՛ հորիզոնական (գործառույթային ոլորտների կառավարում) մակարդակներում):	Արդեն իսկ կատարված կառուցվածքային փոփոխությունների գնահատման հիման վրա վերհանել թերություններն ու մշակել նոր կառուցվածքի նախագիծ և ներկայացնել համալսարանի մասնակիցների ընդհանուր ժողովի հաստատմանը:	2020-2021 ուստարի	Կառավարման արդյունավետության բարձրացում ***(ՊԻԳԲ շրջափուլի համաձայն գնահատման գործակցի աճ),*** կառավարման գործընթացում շահակիցների մասնակցայնության ընդլայնում ***(շահակիցների ներգրավվածության թվի 10% աճ):***	Ռեկտոր Գիտխորհուրդ Կառուցվածքային ստորաբաժանումներ	Համալսարանի բյուջե
ՊԻԳԲ շրջափուլի ներդրման ընդլայնում ՄՈՒՀ-ում իրականացվող բոլոր գործընթացներում՝	Գործընթացների ուսումնասիրություն՝ ՊԻԳԲ-ի կիրառելիության գնահատման նպատակով:	2020-2021 ուստարուց մինչև 2024-2025 ուստարի	ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների արդյունավետության ապահովում:	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
շարունակականության ապահովում:	ՊԻԳԲ-ի ներդրումը համապատասխան գործընթացներում: Մշտադիտարկում՝ ՊԻԳԲ-ի կատարողականության ապահովման նպատակով:		***(պլանավորված արդյունքների չափելիություն համաձայն սահմանված ցուցիչների):***		
Խնդիր 2. Համալսարանի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործում.					
Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխում ըստ ռազմավարական ուղղությունների:	Ֆինանսական պլանավորման և ռեսուրսների բաշխման քաղաքականության վերանայում՝ ռազմավարական նպատակների հասցեականությամբ:	2020-2021 ուստարի	Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ բաշխում՝ ըստ ռազմավարական առաջնահերթությունների: ***(ռազմավարական ուղղությունների հիման վրա կազմված ֆինանսական նախահաշիվ):***	Մասնակիցների ժողով Ռեկտոր	Համալսարանի բյուջե
Խնդիր 3. Ներդնել ֆինանսական ռիսկերի կառավարման համակարգ՝ համալսարանի ֆինանսական կայունությունն ապահովելու նպատակով.					
ՄՈՒՀ-ի երկարաժամկետ պլանավորման ճշգրտման մեխանիզմների մշակում և ներդնում:	Ռիսկերի կառավարման համակարգի, արտաքին գործոնների ազդեցության, ռազմավարական ծրագրի մշտադիտարկման, գնահատման ու վերանայման	2020-2021 ուստարի	Ռիսկերի կառավարման համակարգի, արտաքին գործոնների ազդեցության ***(մշակված մեխանիզմների կիրառություն)***:, ռազմավարական ծրագրի մշտադիտարկման, գնահատման ու	Ռեկտոր Գիտխորհուրդ Կառուցվածքային ստորաբաժանումներ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	մեխանիզմների մշակում:		վերանայման մեխանիզմների առկայություն: ***(ՊԻԳԲ ցուցիչների տեղայնացում ՌԾ-ում)***		
ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ					
Ռազմավարական նպատակ՝ Որակի ապահովման գործընթացների շարունակականությամբ՝ բարձրացնել կրթական գործընթացների և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը Եվրոպական կրթական ժամանակակից պահանջներին համապատասխան:					
Խնդիր 1. Նպաստել համալսարանի կարողությունների միջազգայնացմանը՝ միջազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերի կատարելագործման միջոցով.					
Մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնասիրման հիման վրա ՄԿԾ-ների արդիականացում: Ուսումնական պլանում ընդգրկված առարկայացանկի վերանայում (շուկայի պահանջների ուսումնասիրման և բենչմարքինգի հիման վրա)	Ուսումնասիրել օտարերկրյա և հայաստանյան լավագույն համալսարանների փորձը. իրականացնել բենչմարքինգ և տեղայնացնել:	պարբերաբար իրականացվող ուսումնասիրություններ	Բարելավված մասնագիտական կրթական ծրագրերի տեղայնացման արդյունքներ: ***(ՄԿԾ-երի 20%-ի արդիականացում, ուսպլաններում համապատասխան փոփոխությունների ապահովում)***	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Ամբիոնի վարիչներ	Համալսարանի բյուջե
Խնդիր 2. ՄԿԾ-ների մշտադիտարկում և արդիականացում.					

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
Կրթական ծրագրերի օպտիմալացում:	ՄՈՒՀ-ին լիցենզիայով թույլատրված մասնագիտությունների կազմակերպման ուսումնասիրում, ընդունելության հայտերի բացակայության պատճառների վերհանում և լուծումների ապահովում:	2023-2024 ուստարի	Ոչ «կենսունակ» մասնագիտությունների գծով լիցենզիայի կասեցումԹույլ կենսունակ մասնագիտությունների գծով «Առողջացման» պլանի մշակում և կիրարկում: ***(փաստացի հիմքերի և վերլուծությունների հիման վրա մշակված պլան)***	Ռեկտոր Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Ուսումնական վարչություն Ամբիոնի վարիչներ	Համալսարանի բյուջե
ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ					
Ռազմավարական նպատակ՝ Զարգացնել և ընդլայնել համալսարանի արտաքին կապերը՝ նպաստելով համալսարանի գործընթացների միջազգայնացմանը՝ դրանք համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին:					
Խնդիր 1. Հյուսիսային համալսարանի միջազգայնացման ուղղված գործընթացների և համագործակցության ընդլայնում:					
Մշակել Հյուսիսային համալսարանի միջազգայնացման նոր հայեցակարգ	Բենչմարքինգի միջոցով ուսումնասիրել այլ բուհերի միջազգայնացման հայեցակարգերը և հաշվի առնելով միջազգայնացմանն ուղղված այլ գործոններ, կազմել Համալսարանի միջազգայնացման հայեցակարգը:	2020-2021 ուստարի	Միջազգայնացմանն ուղղված ծրագրի (համալսարանի Գիտխորհրդում հաստատված) ներդրում՝ հիմնված ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի առաջնահերթությունների և միջազգայնացման կարողությունների ընդլայնման վրա:	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին, Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
			(համագործակցություն առնվազն երեք ուղղությամբ՝ ՄԿԾՆերի բարելավման, կրթության որակի ապահովման և ևս մեկ կամընտրական)	հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն	
Խնդիր 2. Ընդլայնել համալսարանի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ.					
Կնքել նոր պայմանագրեր օտարերկրյա գործընկեր համալսարանների հետ, վերանայել հին համագործակցության պայմանագրերը՝ ակտիվացնել վերջիններիս արդյունավետությունը:	1. Նոր գործընկերային հարաբերությունների ստեղծում, միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների և այլ տեսակի միջոցառումների կազմակերպում (այդ թվում առցանց ձևաչափով)։ 2. Առկա համագործակցային համաձայնագրերի մշտադիտարկման հիման վրա նոր մոտեցումների և համագործակցային լուծումների մշակում։	Պարբերաբար	Մշտադիտարկման արդյունքների հիման վրա նոր մեխանիզմների կիրառում: Միջազգային պայմանագրերի կատարման հետևանքով ձևավորված դրական փորձի ներդրման շրջանակի ընդլայնում և արդյունավետության պարբերական գնահատում: Տարեկան ***առնվազն 2*** համատեղ միջոցառումների իրականացում:	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն, Ամբիոնի վարիչներ Որակի ապահովման վարչություն	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
Նպաստել ՄՈՒՀ-ի աշխատակիցների և սովորողների շրջանում ակադեմիական շարժունության զարգացմանը:	1.Կազմակերպել օտար լեզուների լրացուցիչ դասընթացներ ուսանողների, ՊԴԱ և վարչակազմերի համար: 2. Վերանայել մասնագիտական կրթական ծրագրերում օտար լեզուների դասավանդման հետ կապված խնդիրները, մասնագիտական օտար լեզվի դասվանդման առանձնահատկություն ները և վերանայման հիման վրա կատարել փոփոխություններ մասնագիտական կրթական ծրագրերում:	Պարբերաբար	1.Վերհանված խնդիրների հիման վրա կատարված վերլուծություն և առաջարկվող փոփոխությունների փաթեթի հիման վրա ապահովել օտար լեզուների դասավանդման արդյունավետության բարձրացումը: ***(օտար լեզուների իմացության գնահատման համար ցուցիչների սահմանում , նախնական թեսթավորման համեմատ իմացության մակարդակի առնվազն 20%-ի)*** 2. ՄՈՒՀ-ի աշխատողների և սովորողների շրջանում ակադեմիական շարժունության ընդլայնում: ***(շարժունության 10 %-ի աճ)***	Ուսումնահետազոտա կան և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին Լեզուների, գրականության և լրագրության ամբիոնի վարիչ	Համալսարանի բյուջե, Դրամաշնորհա յին ծրագրեր
Քայլեր ձեռնարկել հայ-ռուսական կրթական, գիտահետազոտական և մշակութային կապերն ամրապնդելու ուղղությամբ:	Համագործակցության պայմանագիր կնքել «Ռոսստրուդնիչեստվո»-յի հետ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու	2022-2023 ուստարի	Ռուսաստանի Դաշնության հետ կրթական, գիտահետազոտական և մշակութային կապերի ընդլայնում:	Ուսումնահետազոտա կան և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	նպատակով:		***(տարեկան առնվազն 1 համատեղ միջոցառման կազմակերպում)***	բաժին Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն	
Խնդիր 3. Ընդլայնել համալսարանի համագործակցությունը հայկական սփյուռքի ներկայացուցչությունների հետ տարբեր երկրներում՝ նպաստելով կապերի ընդլայնմանը և այդ կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը.					

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
Կապեր հաստատել արտասահմանյան երկրների հայկական կենտրոնների հետ, մշակել և ներդնել համագործակցության ծրագիր:	Սփյուռքի լավագույն դասախոսներին, մասնագետներին հրավիրել դասախոսությունների /այդ թվում առցանց/ Հյուսիսային համալսարանի ուսանողների համար: Մշակել և ներդնել օտար լեզուների ֆակուլտատիվ դասընթացներ ուսանողների համար (այդ թվում հայերենը որպես երկրորդ օտար լեզու օտարերկրյա ուսանողների համար):	Պարբերաբար	Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդում. համագործակցության կենսունակ ծրագրերի կիրարկում: ***(հաշվետու ժամանակահատվածում համագործակցության առնվազն երեք ծրագրի իրականացում)***	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն, Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն Ամբիոններ	Համալսարանի բյուջե Հնարավոր ֆինանսական միջոցների ներգրավում
Խնդիր 4. Խթանել համալսարանի ներգրավվածությունը գիտակրթական և հետազոտական դրամաշնորհային ծրագրերին.					
Նպաստել համալսարանի ՊԴ կազմի և սովորողների միջազգային գիտական դրամաշնորհներին մասնակցությանը:	Համասալսարանի ՊԴԱ, վարչակազմի և սովորողների դրամաշնորհներ որոնելու, դրամաշնորհային առաջարկություններ պատրաստելու	Պարբերաբար	Համալսարանի միջազգայնացման, աշխատակիցների և սովորողների գիտահետազոտական կարողությունների զարգացմանը միտված միջոցառումների	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին, Գիտական	Համալսարանի բյուջե Դրամաշնորհային միջոցներ Համաֆինանսավորում

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	կարողությունների զարգացում:		կազմակերպում: ***(հաշվետու ժամանակահատվածում 2 դրամաշնորհի մասնակցություն)***	հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն Ամբիոնների վարիչներ	
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ					
Ռազմավարական նպատակ՝ Ակտիվացնել ՄՈՒՀ ընդունվել ցանկացողների և սովորողների հետ տարվող աշխատանքները, և բազմազանեցնել մատուցվող ծառայությունների շրջանակներն ու որակը:					
Խնդիր 1. Համալսարանի փոխգործակցության ընդլայնում հանրապետության հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ կրթական նախաձեռնությունների իրականացման նպատակով.					
Ուսանողական համակազմի ընդլայնման մեխանիզմների Մշակում:	Կազմակերպել հանդիպումներ, սեմինարներ, բաց դռների օր համալսարանում՝ ներկայացնելով ՄՈՒՀ-ն իր բոլոր կողմերով: Կազմակերպել մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպումներ ավագ դպրոցների աշակերտների, միջին մասնագիտական կրթօջախների	Պարբերաբար	Ուսանողական թվակազմի ավելացում: ***(լիցենզիաներով սահմանված քանակի համապատասխան թվակազմի ապահովում՝ կարևորելով առկա համակարգի ուսանողների ընդգրկվածությունը)***	Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն, Որակի ապահովման վարչություն Ամբիոններ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	ուսանողների հետ օգտագործելով նաև առցանց հաղորդակցման հնարավորությունները:				
Խնդիր 2. Համալսարանի օտարերկրյա ուսանողների թվակազմի ավելացում:					
Նախապատրաստական դասընթացների կազմակերպում, լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում:	Ուսումնասիրել օտարերկրյա ուսանողների կողմից հայաստանյան բուհերին ներկայացվող պահանջները, դրա հիման վրա վերհանել ՄՈՒՀ-ի հնարավորությունները և կազմակերպել գործընթացներ:	2021-2022 ուստարուց մինչև 2024-2025 ուստարի	Նախապատրաստական դասընթացների և լրացուցիչ կրթական ծառայությունների ծրագրերի առկայություն: Օտարերկրյա ուսանողների ընդգրկվածության ապահովում ***(առնվազն 1 օտարալեզու և 2 հայալեզու ծրագրերի իրականացում)***:	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին Ուսումնական վարչություն Լրացուցիչ կրթության կենտրոն	Համալսարանի բյուջե
Խնդիր 3. Մշակել և ներդնել համատեղ և կրկնակի դիպլոմով ծրագրեր օտարեկրյա գործընկեր համալսարանների հետ.					
Համալսարանի բակալավրիատի և մագիստրատուրայի աստիճաններում կրկնակի դիպլոմով ծրագրերի մշակում և ներդնում օտարերկրյա գործընկեր համալսարանների հետ:	Մշակել և ներդնել կրկնակի դիպլոմով ծրագրեր գործընկեր համալսարանների հետ: Քայլեր ձեռնարկել ՀՀ և միջազգային բուհերի վարկանիշավորման սանդղակներում առաջընթաց գրանցելու	Պարբերաբար	Համալսարանի կրթական ծրագրերի մրցունակության բարձրացում: ***(UNIRANK վարկանշավորման սանդղակում Հյուսիսային համալսարանի ոչ պետական բուհերի***	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Արտաքին կապերի բաժին, Ամբիոնների վարիչներ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	ուղղությամբ:		*առաջին 7-նյակում ընգրկվածություն)*		
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ					
Ռազմավարական նպատակ՝ Համալսարանի ռազմավարական նպատակներին հասնելու, զարգացման հեռանկարային ծրագրերի իրականացմանն ուղղված գործընթացների շրջանակներում անհրաժեշտ մարդկային ռեսուրսներով ԲՈՒՀ-ի անձնակազմի համալրում և կադրային ներուժի զարգացում:					
Խնդիր 1. Շարունակել կրթական գործընթացների կազմակերպման պրոցեսում երիտասարդ դասախոսների և բարձր որակավորում ունեցող անձնակազմի ներգրավման գործընթացը.					
Սովորողների՝ ներբուհական և միջբուհական գործընթացներում ներգրավվածության բարձրացում:	1.Սովորողների խրախուսման ծրագրերի ընդլայնում: 2.Ուսանողական հանձնաժողովներում սովորողների ընդլայնում (ՈՒԳԸ, ՈՒԽ, Որակի ապահովման վարչության ուսանողական հանձնաժողով): 3. Դասավանդման գործընթացներում առավել ընդգրկուն դարձնել ՄՈՒՀ-ի ասպիրանտական համակազմի ներգրավվածությունը:	Պարբերաբար	Սովորողների շրջանում մոտիվացիայի ապահովում և պրակտիկ կարողությունների զարգացում: ***(երիտասարդ դասախոսների թվակազմի աճ ընդհանուր ՊԴ կազմի տեսակարար կշռում)***	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր, Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն, Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	Համալսարանի բյուջե
Խնդիր 2. Շարունակել համալսարանի պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի մասնագիտական հմտությունների և որակավորման մակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը.					
ՊԴ կազմի և վարչական	1. Հարցումների հիման	Յուրաքանչյուր 2	1. Ապահովել	Մարդկային	Համալսարանի

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
աշխատակազմի վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացում և որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերի կատարելագործում:	վրա վերհանել ԲՈՒՀ-ի աշխատակազմի կարիքները, մշակել վերապատրաստումների անցկացման ծրագրեր և ժամանակացույց ըստ կարիքների: Համագործակցել նաև մասնագիտացված այլ կազմակերպությունների (անհատների) հետ 2. Կազմակերպել ՄՈՒՀ-ի փոփոխված ներքին իրավական ակտերի վերաբերյալ իրազեկվածությանն ուղղված միջոցառումներ:	տարին մեկ անգամ և ըստ անհրաժեշտության:	վերապատրաստումների արդյունքում զարգացած կոմպետենցիաների կիրառելիությունը և բարելավել ուսումնական ծառայությունների մատուցումը: 2. Իրազեկվածության շնորհիվ բարելավել ՄՈՒՀ-ի կառավարման արդյունավետությունը և շահակիցների իրազեկվածությունը: ***(գնահատման արդյունքների համեմատական վերլուծություն՝ ցուցիչի աճ)***	ռեսուրսների կառավարման բաժին Որակի ապահովման վարչություն Ամբիոններ Կառուցվածքային ստորաբաժանումներ	բյուջե
Խնդիր 3. Կատարելագործել ՊԴԱ կազմի և վարչական աշխատակազմի վերապատրաստումների կազմակերպման համակարգի զարգացմանն ու որակավորման բարձրացմանն ուղղված ծրագրերը:					
Վարչական աշխատողների և պրոֆեսորադասախոսական կազմի տարբերակված հավելավճարի համակագի մշակում և ներդնում:	1. Վերանայել բուհում առկա խրախուսման մեխանիզմները: 2. Վերլուծել ՊԴ կազմի գործունեությունը, մասնագիտական աճը: 3. Մշակել չափանիշներ և համապատասխան ընթացակարգեր:	2021-2022 ուստարի	Մշակված հավելավճարային համակարգի ստեղծում՝ միտված խրախուսման գործընթացների ամբողջականացմանը:	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին Որակի ապահովման վարչություն Կառուցվածքային ստորաբաժանումներ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ					
Ռազմավարական նպատակ՝ Զարգացնել Համալսարանի ուսումնագիտաանկ գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսներն ու արդիականացել ենթակառուցվածքները:					
Խնդիր 1. Համալսարանի տեղեկատվական կառավարման մակարդակներում ինֆորմացիոն հոսքերի անընդհատության ապահովման նպատակով ներդրված E-BUH համակարգի գործարկման գործընթացների ամբողջականացում.					
Համալսարանական E-BUH ավտոմատացված տեղեկատվական կառավարման համակարգի ամբողջական գործարկում:	Գործածության մեջ դնել համալսարանի ուսումնական գործընթացին առնչվող էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգը:	2021-2022 ուստարի	Համալսարանի ուսումնական գործընթացների էլեկտրոնային կառավարման, փաստաթղթաշրջանառության վարման համար անհրաժեշտ ավտոմատացված համակարգի ներդրման միջոցով կառավարման արդյունավետության և թափանցիկության բարելավում: ***(ամբողջական գործող E-BUH համակարգ)***	Հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կառավարման բաժին Ֆակուլտետներ Ուսումնական վարչություն Ամբիոնի վարիչներ Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	Համալսարանի բյուջե
Խնդիր 2. Կատարելագործել համալսարանի գիտակրթական գործունեությունն ապահովող ավտոմատացված տեղեկատվական համակարգերը.					
«ՄՈՒԴԼ» էլեկտրոնային ուսուցման համակարգի արդիականացում և դասընթացների քանակի ընդլայնում:	էլեկտրոնային դասընթացների, շտեմարանների ստեղծում և տեղեկատվական	2022-2023 ուստարուց մինչև 2024-2025 ուստարի	Առցանց ուսումնառություն կազմակերպման և էլեկտրոնային ռեսուրսների հասանելիության	Հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կառավարման բաժին Ֆակուլտետներ	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	տեխնոլոգիաների ընդլայնված ու արդյունավետ օգտագործում կրթական գործընթացում:		բարելավում: ***(25 էլեկտրոնային դասընթացի առկայություն)***	Ամբիոնի վարիչներ	
Խնդիր 3. Շարունակել համալսարանի գրադարանային ենթակառուցվածքների արդիականացման և համալրման գործընթացները.					
Էլեկտրոնային գրադարանի արդիականացում:	1.Բարելավել և զարգացնել էլեկտրոնային գրադարանի հնարավորությունները: 2.Էլեկտրոնային գրադարանի գրական բազայի համալրում և տեսադասախոսությունների ստեղծում (ձեռքբերում)	2022-2023 2024-2025 ուստարիներ Պարբերաբար	Արդիականացված էլեկտրոնային գրադարանային ծառայությունների ներդրման միջոցով գրականության ապահովում: ***(10 դասընթացի տեսադասախոսության առկայություն)***	Հեռավար ուսուցման և տեխնոլոգիական կառավարման բաժին Գրադարան Մաթեմատիկայի, ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի ամբիոն	Համալսարանի բյուջե
## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՈՏԵՆՑԻԱԼ					
Ռազմավարական նպատակ՝ Զարգացնել ՄՈՒՀ-ի գիտահետազոտական գործունեության միջազգայնացումը, գիտահետազոտական պոտենցիալն ու ավելացնել հետազոտական բաղադրիչը ՄԿԾ-ներում:					
Խնդիր 1. Խթանել հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավածության ընդլայնումը.					

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
Համալսարանի ՊԴկազմի և սովորողների միջազգային գիտական տպագրական ակտիվության խթանում՝ ազդեցության գործակցով տեղական և միջազգային պարբերականներում հոդվածների տպագրման խրախուսման մեխանիզմների ներդնում:	Նախաձեռնել գործընթացներ համալսարանի հետազոտական ուղղություններով՝ միջազգային, ներբուհական և ներհանրապետական գիտաժողովներ, սեմինարներ կամ վերապատրաստումներ կազմակերպելու ուղղությամբ: Լրացուցիչ դասընթացների կազմակերպում սովորողների համար՝ ակադեմիական գրագրության և գիտական հոդված գրելու կարողությունների զարգացման ուղղությամբ:	Պարբերաբար.յուրաքանչյուր ուստարի առնվազն մեկ անգամ: Պարբերաբար. դասընթացների կազմակերպում մագիստրոսների համար:	Սովորողների գիտահետազոտական կարողությունների զարգացում, սովորողների ավելի մեծ ներգրավվածություն համալսարանի գիտահետազոտական գործունեության մեջ: *(մասնակիցների թվակազմի աճ)* Բարձր գործակցով մասնագիտական պարբերականներում համալսարանի հեղինակների կողմից տպագրված հոդվածների աճի արձանագրում: *(առավելագույնը 10%)*	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն Համալսարանի ամբիոններ Իրավաբանական կլինիկա ՈՒԳԸ Ուսանողական խորհուրդ	Համալսարանի բյուջե Համաֆինասավորում
ՄՈՒՀ-ի գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի խթանում:	Մագիստրոսների,ասպիրանտների և ՊԴԱ կազմի մասնակցությամբ գիտահետազոտական ներքին դրամաշնորհային մրցույթների ընթացակարգերի մշակում, կազմակերպում	Յուրաքանչյուր երկու ուստարին մեկ անգամ	ՄՈՒՀ-ի՝ առաջնահերթություններով պայմանավորված, գիտահետազոտական կարողությունների զարգացում: *(առնվազն 2 ներքին*	Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Գիտական հետազոտությունների, նորարարական	Համալսարանի բյուջե Լրացուցիչ ֆինանսներ

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	և անցկացում:		***դրամաշնորհային մրցույթի անցկացում)***	ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն ՈՒԳԸ	
Խնդիր 2. Զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները.					
Ավելացնել սովորողների ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու կարողությունները՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնուրույնության բաղադրիչի ավելացում:	ՄԿԾ-ներում դասավանդման հետազոտական բաղադրիչի ավելացում և վերլուծական, քննադատական կարողությունների ձևավորմանն ուղղված դասընթացների նկարագրերի վերանայում ը/էսսեներ, ինքնուրույն վերլուծություններ, գիտական ներկայացումներ, թեմատիկ քննարկումներ:	2022-2023 2023-2024 ուստարիներ	Հետազոտական կարողությունների զարգացում: ***(ՄԿԾ-ներում ինքնուրույն և գործնական աշխատանքների բաղադրիչի կշիռի փոփոխություն՝ ի նպաստ գործնականի)*** Ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր ապահովված հետազոտական	Համալսարանի ամբիոններ Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Ուսումնական վարչություն Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
	Կազմակերպել լրացուցիչ դասընթացներ ավարտական աշխատանք և մագիստրոսական թեզ գրելու կարողությունները զարգացնելու ուղղությամբ:	Յուրաքանչյուր ուստարվա համար առնվազն 2 անգամ:	բաղադրիչով: ***(գնահատման միվորների համեմատական բարձր ցուցանիշ)***	կրթության կենտրոն ՈՒԳԸ	
Խնդիր 3. Շարունակել բարելավել երրորդ աստիճանի կրթության որակը Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխան.					
Բարձրագույն կրթության երրորդ աստիճանում Զալցբուգյան սկզբունքների հետևողական ներդրում: Ամբիոններում երրորդ աստիճանի զարգացմանն ուղղված գործունեության խթանում:	Ուղղորդել լավագույն մագիստրոսներին դեպի երրորդ աստիճանի կրթությունը: Հիմնել երիտասարդ գիտնականների միություն՝ մշակելով կանոնակարգ և պլանավորելով քայլեր երիտասարդ դասախոսների և երրորդ աստիճանում սովորողների գիտահետազոտական ակտիվությունը խթանելու ուղղությամբ:	Պարբերաբար	Զալցբուրգյան սկզբունքների ներքո՝ երրորդ աստիճանի կրթություն և երիտասարդ գիտնականների գիտահետազոտական գործունեությունը խթանող աջակցային միջավայրի ստեղծում, հետազոտողների՝ որպես ամբիոնների աշխատակիցների կարգավիճակի ձեռքբերում և երիտասարդ գիտնականների միջև համատեղ գործունեության խթանում: ***(երրորդ աստիճանի կրթության խթանման համար ապահովված***	Համալսարանի ամբիոններ Ուսումնահետազոտական և միջազգայնացման գծով պրոռեկտոր Գիտական հետազոտությունների, նորարարական ծրագրերի և հետբուհական մասնագիտական կրթության կենտրոն	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
			նախապայմաններ, հայցողների/ասպիրանտների թվի աճ)		
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ					
Ռազմավարական նպատակ՝ Շահակիցների հանդեպ որդեգրած տեղեկատվական ու սոցիալական պատասխանատվության գործառույթի իրականացում՝ նրանց սոցիալական ադապտացման, լրացուցիչ կրթական ու մասնագիտական աճին նպաստող ծրագրերի մշակում և ներդնում:					
Խնդիր 1. Մշակել ՄՈՒՀ-ի կողմից արտաքին ու ներքին շահակիցներին տրամադրվող կրթական ծառայությունների՝ ըստ ուղղությունների մատուցում.					
Իրականացնել ՄՈՒՀ-ի շահակիցների համար լրացուցիչ կրթական, մասնագիտական ու սոցիալական ադապտացման ծրագրեր:	Հարցումների միջոցով վերհանել շահակիցների կարիքները: Ստեղծել կրթական ռեսուրսներ՝ համապատասխան ծրագրեր իրականացնելու նպատակով:	Պարբերաբար	Կազմակերպված կրթական դասընթացների արդյունքում կրթական, մասնագիտական ու սոցիալական ադապտացման մակարդակի բարձրացում: Ֆինանսական հոսքերի ապահովում: ***(առնվազն լրացուցիչ կրթության երեք ծրագրերի իրականացում)***	Շրջանավարտների և պրակտիկայի կոորդինատոր Ուսանողական խորհուրդ Որակի ապահովման վարչություն	Համալսարանի բյուջե
Խնդիր 2. Ձևավորել, ամրապնդել ու զարգացնել ՄՈՒՀ-ի և արտաքին շահակիցների միջև բազմակողմանի փոխհամագործակցություն.					
Իրականացնել ՄՈՒՀ-ի շահակիցների իրավաբանական	Շահակիցների համար իրավաբանական ծառայությունների/	Պարբերաբար	Ընդլայնված համագործակցություն: Շահակիցների	Շրջանավարտների և պրակտիկայի	Համալսարանի բյուջե

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
խորհրդատվություններ:	դասընթացների կազմակերպում:		մասնակցայնության ընդլայնում: ***(մասնակիցների ներգրավվածության աճ)***	կոորդինատոր Որակի ապահովման վարչություն Իրավաբանական կլինիկա Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին	
Իրականացնել ուսումնագործ-նական համատեղ ծրագրեր արտաքին շահակիցների հետ:	Բուհի ուսանողների և շրջանավարտների համար աշխատանքային գործունեության նոր հնարավորությունների ստեղծում:	Յուրաքանչյուր ուստարի	Ուսանողների գործնական հմտությունների զարգացում: ***(արտաքին շահակիցների ներգրավվածության ցուցանիշի ընդլայնում)***	Շրջանավարտների և պրակտիկայի կոորդինատոր Որակի ապահովման վարչություն Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն	Համալսարանի բյուջե
Խնդիր 3. Բարելավել, հարստացնել և արդիականացնել կատարված աշխատանքների արդյունավետության ստուգման նպատակով հետադարձ կապի մեխանիզմները.					

Գործողության նկարագիր	Քայլեր	Կատարման ժամանակահատված	Վերջնարդյունք/ԳԱՑ	Պատասխանատու	Ֆինանսներ
Իրականացնել հասարակական իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ:	Հարցումներ անցկացնել շահառուների շրջանում՝ հավաքված տվյալների վերլուծության հիման վրա բարելավելով գործընթացները:	Պարբերաբար	Հետադարձ կապի մեխանիզմների բարելավման միջոցով ամրապնդել շահառուների հետ փոխհամագործակցությունը: *(շահակիցների իրազեկվածության ցուցուցանիշի աճ, առնվազն 10% և ազդեցության վերլուծություն):*	Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն	Համալսարանի բյուջե
Ապահովել ՄՈՒՀ-ի գործունեության վերաբերյալ պարբերական հաշվետվողականություն:	Հավաքագրել և հրապարակել ստորաբաժանումների տարեկան վերլուծական հաշվետվությունները՝ հաշվետվողականության ծրագրին համապատասխան:	Յուրաքանչյուր ուստարի	Հաշվետվողականության ներդման միջոցով ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկության ապահովում: *(յուրաքանչյուր տարի հրապարակված ռեկտորի տարեկան հաշվետվություն)*	Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոն, Որակի ապահովման վարչություն Պրոռեկտորներ Ռեկտոր	Համալսարանի բյուջե